ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ · ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՍԱՐՕ ԽՈԴԱՎԵՐԴԵԱՆ ՈՐ Ի ՄԻԼԱՆ, ԻՏԱԼԻԱ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սէր եւ օրհնութիւն ենք բերում Ձեզ՝ մեր Եկեղեցու հաւատաւոր զաւակին:

Սիրելի պրն Խոդավերդեան,

Տարիներ շարունակ ճանաչում ենք հաւատաւոր հայորդուդ եւ գոհունակութեամբ ականատես ենք Ձեր կեանքի բարի ընթացքին, որ զարդարուած է ազգային եւ եկեղեցական մեր կեանքում սպանձնած յանձնառութիւններով՝ ի սէր աստուածասէր մեր ժողովրդի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Մեծապէս գնահատելի է Ձեր աւանդը Իտալիայում բնակեալ հայորդեաց ազգային եւ հոգեւոր կեանքի կազմակերպման եւ առաւել զօրացման գործում: Անդամակցելով Միլանի Սուրբ Քառասուն Մանկունք Եկեղեցու համայնքային վարչութեանը եւ ստանձնելով Ատենապետի պաշտօնը, Դուք աշխոյժ գործունէութեամբ աջակից էք հոգեւոր հովուին՝ իրականացնելու մեր Եկեղեցու աստուածօրհնեալ առաքելութիւնը, որպէսզի հաւատը, եկեղեցասիրութեան ու ազգասիրութեան ոգին միշտ արթուն մնան Իտալիոյ հայութեան սրտերում:

Հայորդուդ ազգասէր ու եկեղեցանուէր ոգին արտայայտուել է նաեւ Մայր Հայրենիքում իրականացուած նախաձեռնութիւններով՝ յանուն մեր Եկեղեցու պայծառութեան եւ հաւատաւոր ժողովրդի հոգեւոր կեանքի շինութեան: Հայրապետիս համար խորը գոհունակութիւն է, որ Մեր հրաւէրին ընդառաջ Քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն հռչակման 1700-ամեակի յոբելեանական տարում Դուք սիրով ստանձնեցիք Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Եկեղեցու ջահերի պատրաստման, ապա նաեւ Էջմիածին քաղաքի մուտքին Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջի կառուցման հովանաւորութիւնը: Ուրախ ենք մեծապէս, որ մեր Եկեղեցու, հարազատ ժողովրդի եւ Սուրբ Էջմիածնի հանդէպ Ձեր որդիական

անկեղծ սէրը առաջնորդում է Ձեզ մեծարժան գործերի՝ Ձեր անունն արժանիօրէն դասելով Սուրբ Էջմիածնի բարերարների պատուաւոր շարքում:

Եկեղեցաշէն ու ազգօգուտ Ձեր գովարժան ծառայութեանց բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալ Տիրոջ օրհնութիւնն ենք հայցում Ձեզ, Ձեր ազնիւ փիկնոջն ու դստերը եւ մաղթում նորանոր յաջողութիւններ Ձեր եկեղեցաշէն ու ազգօգուտ գործերին:

Թող Բարին Աստուած Իր Սուրբ Աջի հովանու ներքոյ պահպանի օրինակելի գործերով ու հաւատաւոր ոգով ապրող Ձեր ընտանիքը՝ պարգեւելով Ձեզ քաջառողջ եւ երջանիկ օրեր:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**Օրհնութեամբ՝**

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 1-ն Յունիսի
յամի Տեառն 2010 եւ ի թուին հայոց ՌՆԾԹ-
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 559